



COVID-19-ի դեմ պատվաստում. հաճախակի տրվող հարցեր

ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչո՞ւ է կարևոր պատվաստվելը

COVID-19-ի դեմ պատվաստումը պաշտպանում է մարդկանց COVID-19-ի հետևանքով ծանր հիվանդանալուց և հիվանդանոցում հայտնվելուց կամ մահանալուց: Այն նաև նվազեցնում է COVID-19-ի պատճառով քրոնիկական հիվանդությունն ունենալու (օրինակ՝ երկարատև COVID) և աշխատանքից ու դպրոցից բացակայելու վտանգը:

Բացի այդ, պատվաստումը նվազեցնում է COVID-19-ը ուրիշներին փոխանցելու վտանգը: Սա հատկապես օգտակար է՝ պաշտպանելու այն մարդկանց, որոնց համար [ծանր հիվանդանալու վտանգն ավելի մեծ է](#):

Խորհուրդ է տրվում, որ մարդիկ, ովքեր նախկինում վարակվել են COVID-19-ով, այնուամենայնիվ պատվաստվեն, որպեսզի ամրապնդեն իրենց անվարակուսակությունը և նվազեցնեն COVID-19-ի հետևանքով հիվանդանոցում հայտնվելու վտանգը:

Որքա՞ն լավ են գործում պատվաստանյութերը

COVID-19-ի դեմ պատվաստանյութերը շատ լավ են գործում COVID-19-ի հետևանքով ծանր հիվանդանալուց, հիվանդանոցում հայտնվելուց և մահից պաշտպանելու հարցում: COVID-19-ի դեմ բոլոր դեղաչափերը [ժամանակին ստացած](#) անձանց համեմատ, չպատվաստված անձինք [ավելի հավանական է, որ կվարակվեն COVID-19-ով](#), էլ ավելի հավանական է, որ [COVID-19-ի հետևանքով կհայտնվեն հիվանդանոցում](#), և շատ ավելի հավանական է, որ [կմահանան COVID-19-ից](#):

Մասնագետները նկատում են, որ ժամանակի ընթացքում պաշտպանությունը թուլանում է, հատկապես որոշ մարդկանց մոտ, օրինակ՝ 65 տարեկան և ավելի բարձր տարիքի, ինչպես նաև թույլ իմունային համակարգ ունեցող: Այս պատճառով բոլոր առաջարկվող դեղաչափերը, ներառյալ՝ խթանիչները, ժամանակին ստանալը կարևոր է: Թարմացված (երկվալենտ) խթանիչ դեղաչափերը օգնում են վերականգնել այս պաշտպանվածությունը, որը ժամանակի ընթացքում նվազել էր: Տե՛ս [«խթանիչ դեղաչափերը»](#)՝ լրացուցիչ տեղեկությունների համար:

Գիտության և վիրուսի զարգացմանը զուգահեռ՝ պատվաստանյութերի վերաբերյալ առաջարկություններն ավելանում են: Գիտնականները և բժիշկ-փորձագետները շարունակում են ուշադիր հետևել տարբեր տարիքի և վտանգի տարբեր գործոններ ունեցող մարդկանց դիմադրողականության նվազման նշաններին: Նրանք նաև հետևում են, թե որքան լավ են պատվաստանյութերը պաշտպանում վիրուսի նոր ենթատեսակներից:

Ո՞ր պատվաստանյութերն են հասանելի Միացյալ Նահանգներում

Միացյալ Նահանգներում հաստատված են կամ թույլտվություն ունեն COVID-19-ի դեմ չորս պատվաստանյութեր: Դրանք պատրաստվում են Pfizer-BioNTech-ի (ապրանքանիշի անունը՝ Comirnaty), Moderna-ի (ապրանքանիշի անունը՝ Spikevax), Novavax-ի և Janssen/Johnson & Johnson-ի կողմից: Pfizer և Moderna պատվաստանյութերը թույլատրված են 6 ամսական և ավելի բարձր տարիքի անձանց համար: Novavax պատվաստանյութերը թույլատրված են 12 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց համար: Johnson & Johnson (J&J) պատվաստանյութերը թույլատրված են 18 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց համար:

CDC-ն խորհուրդ է տալիս COVID-19-ի դեմ Pfizer, Moderna և Novavax պատվաստանյութերը J&J պատվաստանյութի փոխարեն: J&J պատվաստանյութը [կարող է օգտագործվել որոշ դեպքերում](#):

Ավելին իմանալու համար այցելեք CDC-ի՝ [«ժամանակին ստացեք COVID-19-ի դեմ բոլոր պահանջվող դեղաչափերը, ներառյալ՝ խթանիչները»](#) կայքէջ:

Ո՞րն է տարբերությունը COVID-19-ի դեմ բնօրինակ (միավալենտ) և





COVID-19-ի դեմ պատվաստում. հաճախակի տրվող հարցեր ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թարմացված (երկվալենտ) պատվաստանյութերի միջև

Միավալենտ պատվաստանյութերը թիրախավորում են COVID-19 առաջացնող վիրուսի սկզբնական տարբերակը: Պատվաստանյութերը թարմացվել են՝ ստեղծելու երկվալենտ պատվաստանյութեր, որոնք թիրախավորում են և՛ COVID-19-ի սկզբնական տարբերակը, և՛ Օմիկրոն BA.4 և BA.5 ենթատեսակները:

- **Հիմնական շարքի դեղաչափեր:** Հիմնական շարքի բոլոր պատվաստումների համար օգտագործվում են միավալենտ պատվաստանյութեր, մեկ բացառությամբ. Pfizer-ի երկվալենտ պատվաստանյութն օգտագործվում է որպես 3-րդ դեղաչափ 6 ամսականից 4 տարեկան երեխաների համար:
- **Խթանիչ դեղաչափեր:** Pfizer-ի և Moderna-ի բոլոր խթանիչ դեղաչափերը թարմացված (երկվալենտ) պատվաստանյութեր են: Novavax-ի խթանիչը բնօրինակ (միավալենտ) պատվաստանյութ է:

Որտեղի՞ց կարող եմ ստանալ լրացուցիչ տեղեկություններ



- Այս «Հաճախակի տրվող հարցեր»-ը կամ COVID-19-ի դեմ պատվաստման այլ թեմաների վերաբերյալ հաճախակի տրվող հարցերը (ՀՏՀ-ներ) տպելու կամ տեսնելու համար սկանավորեք QR ծածկագիրը կամ այցելեք [«COVID-19 -ի դեմ պատվաստման ՀՏՀ-ներ»](#) կայքէջ:
- [VaccinateLACounty.com](#)՝ ներառյալ [«COVID-19-ի դեմ պատվաստման ժամանակցույց»-ը](#), որն աղյուսակներով ցույց է տալիս պատվաստման յուրաքանչյուր դեղաչափի ընդունման ժամանակը և տեղեկություններ է տալիս այն մասին, թե [ինչպես պատվաստվել:](#)
- CDC-ի՝ [«COVID-19-ի դեմ պատվաստանյութեր»](#) կայքէջ:
- Եթե հարցեր ունեք, խոսեք Ձեր բժշկի հետ:

